

Մանուկ Ա. Հարությունյան
փիլիսոփ. գիտ. թեկնածու

ՕՏԱՐՎԱԾ ՀԱՅՐ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

քաղաքագիտական դիտանկյուն*

«Օտարում»-ը ժամանակակից հասարակական գիտությունների հիմնարար հասկացություններից է: Այդ է վկայում ոչ միայն իմացության ամենատարբեր ոլորտներում տվյալ հասկացության լայն տարածման և օգտագործման փաստը, այլև տարբեր գիտությունների ներկայացուցիչների՝ փիլիսոփաների, ընկերաբանների, մշակութաբանների, քաղաքագետների և ուրիշների ձգտումը համակողմանիորեն մշակելու օտարման պրոբլեմը: Ընդամին, հետազոտողների առջև ծառանում են հետևյալ մեթոդաբանական հարցերը. 1. բացահայտել «օտարում» հասկացության բովանդակությունն ու նշանակությունը քաղաքագիտության այնպիսի հիմնարար հասկացությունների հետ նրա հարաբերության մեջ, ինչպիսիք են քաղաքական համակարգն ու քաղաքական մշակույթը, հոգեկերտվածքը, մասնակցային ժողովրդավարությունը և ազգային համերաշխությունը, 2. ցույց տալ քաղաքական օտարման ձևերի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ամենից առաջ քաղաքական համակարգի բնույթով:

Նախքան բուն «օտարում» հասկացության քննությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում թեկուզև նախնական պատկերացում տալ նրա ծագման և հոլովույթի մասին:

Գեռևս 17-18-րդ դդ. Արևմուտքում «օտարում» բառը լայնորեն օգտագործվում էր լատիներեն alienatio (օտարում) հասկացության միջոցով: Alienatio բառն ուներ առնվազն երեք նշանակություն. իրավական ոլորտում՝ սեփականության կամ իրավունքի հանձնում-փոխանցում, սոցիալական ոլորտում՝ անհատի առանձնացում կամ մեկուսացում այլ մարդկանցից, իր երկրից կամ աստվածներից, բժշկահոգեբանական ոլորտում՝ մտավոր գործառույթների խախտվածություն, հոգեկան հիվանդություն:

Հետագայում 19-րդ դարի սկզբի գերմանական փիլիսոփայական գրականության մեջ ավելի բազմանշանակ իմաստ ձեռք բերեց մեկ այլ՝ Entfremdung բառը, որ ևս նշանակում է օտարում:

Արևմուտքում օտարման պրոբլեմի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեցած Կ. Մարքսի «օտարման տեսության» հիմքը կազմեցին Գ. Հեգելի փիլիսոփայական հայացքները: Կ. Մարքսի համար կարևոր նշանակություն են

* Դողվածն ընդունվել է տպագրության 17. 06. 2010:

ունեցել մաս Մ. Հեսի գիտական հայացքները: Վերջինս գտնում էր, որ կրոնի մեջ օտարված ձևով իշխում է աստված, տնտեսության մեջ՝ փողը, իսկ քաղաքականության մեջ՝ պետական իշխանությունը¹:

Իր վաղ շրջանի գործերում Կ.Մարքսը օտարումը դիտում էր որպես «հոգևոր արտադրության» ֆենոմեն՝ կրոնական գիտակցության մեջ մարդկային էության օտարման արտահայտություն: Նրա 1842-1843 թթ. աշխատությունները ցույց են տալիս, որ սկսելով կրոնական օտարումից, այնուհետև Կ. Մարքսը անցել է քաղաքական օտարման ձևի ուսումնասիրությանը: «Իրավունքի հեգելյան փիլիսոփայության քննադատության շուրջը» (1843) աշխատության մեջ Կ. Մարքսը նշում էր. «Բյուրոկրատիան կազմում է ... առանձնահատուկ, ներփակ հասարակություն պետության մեջ»²: Նա առանձնացնում էր բյուրոկրատիայի հետևյալ գծերը՝ հրապարակայնության բացակայությունը, հիերարխիկ կառուցվածքը, ներփակ կորպորատիվ բնույթը, հեղինակության սրբազործումը, չինովնիկների կարիերիզմը:

Պետության էության, կրոնական, քաղաքական օտարման հիմքերի հետազոտությունը Կ.Մարքսին աստիճանաբար մոտեցրել է տնտեսության վերլուծությանը, համապատասխանաբար՝ տնտեսական օտարման ուսումնասիրությանը: Այդ իմաստով վճռորոշ նշանակություն ունեն նրա «1844 թ. տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրերը»:

Եթե Կ.Մարքսի նախորդները օտարումը դիտում էին որպես փիլիսոփայական (գերմանական դասական փիլիսոփայություն) կամ սոցիալ-փիլիսոփայական («Հասարակական դաշինքի» տեսաբանները և Մ. Հեսը) կատեգորիա, ապա սկսած վերոնշյալ աշխատանքից՝ Կ. Մարքսն օտարումը համարում էր տնտեսագիտական-փիլիսոփայական հասկացություն: Մինչ այդ «օտարում» հասկացությունը նրա կողմից ուսումնասիրվում էր «շահ» հասկացությանը զուգահեռ: Կարելի է առանձնացնել հետևյալ շրթան, որն արտացոլում է Կ.Մարքսի մտքերի ընթացքը. պետություն (քաղաքական օտարում) – հանրնդհանուր շահ – մասնավոր շահ – մասնավոր սեփականություն – աշխատանքի օտարում (տնտեսական օտարում): **Իսկ օտարման տարբեր ձևերի ընդհանրական փիլիսոփայական հիմքը մնում է նույնը. սուբյեկտը իր գործունեությամբ կյանքի է կոչում և իրենից առանձնացնում է մի բան, որն իր նկատմամբ դառնում է խորթ և իրեն հակադիր, թշնամական ուժ:**

Սոցիալական օտարման մեջ Կ. Մարքսը առանձնացնում է նրա հիմքը կազմող աշխատանքի օտարումը: Նա ուսումնասիրում է ոչ թե գաղափարի «կյանքը», համաշխարհային զարգացման ընդհանուր սխեման, այլ սոցիալական կյանքը, ընդ որում՝ նախևառաջ քաղաքական-տնտեսական կտրվածքով: Հենց սրանում է Կ. Մարքսի հայտնագործության էությունը, քանի որ օտարման մյուս ձևերը նրանից առաջ արդեն հայտնի էին: Նա աշխատանքի օտարումից բխեցնում է օտարման մյուս բոլոր ձևերը, այդ թվում՝ քաղաքական օտարումը: Կ. Մարքսը մասնավոր սեփականության արմատները բացահայտել է աշխատանքի օտարման մեջ և նրա միջոցով: Կ. Մարքսը մարդու օտարման և ինքնօտարման ֆենոմենները բխեցնում է աշխատանքի նկատմամբ բանվորի վերաբերմունքից: Քանի որ բանվորի համար աշխատանքը միայն գոյության միջոց է, աշխատանք-

1 Маркс К. и Энгельс Ф. Из ранних произведений. М., 1956, с.520.

2 Маркс К., Энгельс Ф. Соч., 2-е изд., т.1, с. 276-271.

քային գործունեության շարժառիթը ոչ մի ընդհանուր բան չունի նրա օբյեկտիվ բովանդակության հետ: Բանվորին չեն պատկանում ոչ աշխատանքի միջոցները, ոչ էլ նրա արդյունքները, իսկ դա նշանակում է, որ աշխատանքի պրոցեսում ինքը ոչ թե իրեն, այլ ուրիշին է պատկանում: Աշխատանքի արդյունքից, իր կենսագործունեությունից և էությունից օտարման անմիջական հետևանքը մարդու օտարումն է մարդու³:

Վերջապես՝ իր «Գերմանական գաղափարախոսության» և ուշ շրջանի աշխատություններում, ներառյալ «Կապիտալի» մեջ, աշխատանքի նկատմամբ բանվորի սուբյեկտիվ վերաբերմունքը Կ.Մարքսը բխեցում է օբյեկտիվ սոցիալական գործընթացներից, դրանք փոխկապակցում մասնավոր սեփականության և աշխատանքի հասարակական բաժանման գոյության հետ: Ընդ որում, մարդկային ուժերի **առարկայացումը**, որն առկա է հասարակության զարգացման ցանկացած փուլում, Կ. Մարքսը տարբերում է այդ ուժերի **իրայնացումից** որպես առարկայացման առանձնահատուկ ձևից, երբ մարդը կորցնում է սուբյեկտի որակը և իջեցվում է իրի մակարդակի: Այլ խոսքով, աշխատանքի օտարումը, նրա էությունը կապում է մարդու իրայնացման և իրերի անձնավորման հետ:

Միաժամանակ՝ օտարման սոցիալական փաստը (օրինակ՝ օտարումը սեփականությունից և արտադրամիջոցների նկատմամբ վերահսկողությունից) Կ. Մարքսը սահմանազատում է դրանով հարուցված գաղափարախոսական աղավաղումներից (սպրանքային ֆետիշիզմ, խեղաթյուրված գաղափարախոսություն և այլն): Այսպիսով, Կ. Մարքսն օտարման իր տեսությունը մշակելիս նկատի է ունեցել հիմնականում արտադրության ոլորտը և հենվել է նախևառաջ տնտեսագիտական հասկացությունների վրա:

Օտարման պրոբլեմի հետագա ուսումնասիրությունը կապվում է էկզիստենցիալիստ փիլիսոփաներ Մ. Հայդեգերի, Կ. Յասպերսի, Ժ. - Պ. Սարտրի, ինչպես նաև ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացուցիչներ Է. Ֆրոմի, Հ. Մարկուզեի և ուրիշների անունների հետ: Նրանք դուրս եկան օտարման մարքսյան ըմբռնման գուտ տնտեսագիտական սահմաններից, օտարման երևույթներ հայտնաբերեցին և ուսումնասիրեցին քաղաքականության, մշակույթի, կրթության, սպառման, ընտանիքի, ժամանցի և այլ ոլորտներում: Ընդ որում, նրանք բոլորը, յուրաքանչյուրն՝ իր ձևով, օտարման համընդհանրացման գործընթացը գնահատել են իբրև «արդյունաբերական հասարակության», գիտատեխնիկական որակական վերափոխումների անխուսափելի արդյունք:

Ներկայումս հանրագիտարանային և բառարանային հրապարակումներում օտարման տակ բնութագրվում են, **նախ**, այն գործընթացները և նրանց հետևանքները, երբ մարդկային գործունեության արդյունքները, ինչպես նաև մարդու հատկանիշներն ու առանձնահատկությունները վերածվում են մարդկանցից անկախ և նրանց վրա իշխող մի բանի, **երկրորդ**, զանազան երևույթների և մարդկանց միջև հարաբերությունների վերածումը ինչ-որ այլ բանի, քան դրանք կան ինքնին, այսինքն՝ դրանց ռեալ, կենսական իրողությունների աղավաղումն ու խեղաթյուրումը մարդկանց գիտակցության մեջ⁴:

Ինչ վերաբերում է քաղաքական օտարմանը, ըստ առավել տարածված սահ-

3 Ավելի մանրամասն տե՛ս Маркс К., Энгельс Ф. Соч., 2-е изд., т. 42, с. 98.

4 Стен Социологический энциклопедический словарь. Под ред. Г.В.Осипова. М., 1998, с.229; Философский энциклопедический словарь. Под ред. И.Т.Фролова. М., 1986, с.351.

մանման՝ դա մի վիճակ է, երբ քաղաքական գաղափարները, հարաբերությունները և իմաստիտուտները վերածվում են մարդկանցից անկախ, իսկ երբեմն՝ նրանց հակադիր մի բանի⁵: Այս սահմանումը թերի է, նրան պետք է ավելացնել մարդկանց քաղաքական հարաբերությունների աղավաղումն ու խեղաթյուրումը, որն արտացոլվում է նրանց գիտակցության մեջ:

Սակայն, նախքան քաղաքական օտարման ձևերի վերլուծությանն անցնելը անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ որոշ մեթոդաբանական բնույթի հարցերի: Բանն այն է, որ օտարման պրոբլեմին նվիրված փիլիսոփայական-սոցիոլոգիական գրականության մեջ գլխավոր ուշադրությունը դարձնում են մակրոսոցիալական գործընթացներին: Մինչդեռ մեզ համար ոչ պակաս կարևոր է օտարման սուբյեկտիվ կողմի ուսումնասիրությունը: Այսինքն՝ այն, թե ինչպես են այդ սոցիալ-քաղաքական, տնտեսական գործընթացներն արտացոլվում շարքային քաղաքացու գիտակցության մեջ:

Ամերիկյան սոցիոլոգիայում լայնորեն օգտագործվում են քաղաքական օտարվածության հետևյալ բնութագրերը: **Անգորությունը** բնութագրում է սեփական կենսական հանգամանքները կամ ստեղծված սոցիալ-քաղաքական իրադրությունը վերահսկելու կամ վերափոխելու քաղաքական անկարողունակության զգացումները: **Անիմաստությունը**՝ քաղաքական խնդիրների անհասկանալիության, անհասանելիության զգացումները: **Նորմատիվ** ապակողմնորոշվածության վիճակը՝ սեփական նպատակներին հասնելու համար հասարակության կողմից չխրախուսվող, նրա հավանությանը չարժանացած, անօրինական միջոցների դիմելու անհրաժեշտությունը: **Քաղաքական մեկուսացումը**՝ հասարակության մեջ կամ որոշակի սոցիալական խմբում ընդունված քաղաքական արժեքների մերժումը: **Ինքնամեկուսացումը**՝ քաղաքական գործողություններին մասնակցությունը, որը ներքին բավարարվածություն չի պատճառում և ընկալվում է որպես արտաքին անհրաժեշտություն: **Քաղաքական միայնությունը**՝ բնութագրում է խմբի, հասարակության կողմից ընդունված չլինելու զգացողությունը⁶:

Ընկերաբանական հետազոտություններից պարզվել է, որ հենց քաղաքականության ոլորտում է, որ մարդիկ ավելի հաճախ են տառապում անգորության, անիմաստության և ինքնօտարման զգացումներով: Եվ քաղաքական գիտակցության և ինքնագագացողության վիճակը, որը բնութագրվում է վերոնշյալ հատկանիշներով, հենց **քաղաքական օտարվածությունն** է: Իսկ այն անձը, որը հստակ ցուցադրում է այդպիսի ինքնագագացողություն և գիտակցություն, քաղաքականապես օտարված անհատն է:

Հայաստանում ընկերաբաններն ու քաղաքագետներն, ինչպես նաև լրագրողները, հասարակական կարծիքի վիճակը գնահատելիս, իսկ շարքային քաղաքացիները՝ սեփական սոցիալական ապրումներն ու հայացքներն արժևորելիս, լայնորեն գործածում են քաղաքական օտարում հասկացությունը: Նկատենք, որ ընկերաբանները, սովորաբար, չեն սահմանափակվում Հայաստանի քաղաքական իրականության մակերեսային առադրությամբ: Իհարկե, նրանք հաշվի են առնում ոչ միայն քաղաքական անվստահության և անգորության աճի քանակական ցուցանիշները, քանզի անվստահության քանակապես չափելի մակարդակը շատ կարևոր դեր է խաղում, բայց չափման մասշտաբներն այժմ

5 Стѹ Политологический словарь в 2-х частях. Ч.2, М. 1994, с.281.

6 Стѹ «Annual Review of Sociology», N 1, Polo Alto (Calif.), 1975, p. 97.

շատ ավելի լայն են դարձել: Դրանք ներառում են հայ հասարակությանը հատուկ ազգային բարոյականության, քաղաքականության ու փիլիսոփայության հայեցակարգերը: Այդ գործոններից շատերը, որոնք ազդում են Հայաստանի շարքային քաղաքացու ամենօրյա կյանքի որակական կողմի վրա, ոչ մի թվային ցուցանիշով չի կարելի չափել:

Թեև «օտարում» բառի գործածական պրակտիկան չի համապատասխանում օտարման տեսական կոնցեպցիայի շատ թե քիչ համարժեք բովանդակությանը, սակայն բավական ճշգրիտ կերպով բնութագրում է Հայաստանի շարքային քաղաքացու իրական վիճակը, որը սուր է զգում իր մեկուսացվածությունը, օտարվածությունը այն հիմնական ինստիտուտներից, խմբավորումներից և անձանցից, ովքեր Հայաստանում վերահսկում են քաղաքականությունը:

Ամվանի հայ ընկերաբան Գ.Պողոսյանը իր հարցազրույցներից մեկում նշում է. «... ժողովուրդը դժգոհ է իշխանություններից, դժգոհ է իր նկատմամբ իշխանությունների վերաբերմունքից, դժգոհ է նրանից, թե ով է հատկապես ներկայացնում իշխանությունը, թե ով է կանգնած իշխանության դեկին, այսինքն՝ խոշոր հաշվով, դժգոհ է կադրային քաղաքականությունից: Լուրջ պահանջներ են ներկայացվում դատական համակարգին, տնտեսական քաղաքականությանը: Տնտեսությունը մենաշնորհված է մի խումբ մարդկանց կողմից, որոնք ստանում են գերշահույթ: Լուրջ պահանջներ կարելի է ներկայացնել կենսամակարդակի, իրավական կամայականության մակարդակին: Եվ ոչ մի կերպ հնարավոր չէ մարդկանց բերանը փակել»⁷: Իշխանությունների և հայ հասարակության փոխհարաբերությունների վերլուծությունից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ հենց իշխանությունն է բնակչության մեծամասնության քաղաքական օտարվածության գլխավոր գեներատորը: Մեծամասնությունն ակնհայտորեն չի պաշտպանում իշխանությունների «հակաճգնաժամային» քաղաքականությունը: Մովորաբար, հարկադրված է հարմարվել նրա հետևանքներին կամ էլ՝ որքան կարելի է հեռու մնալ այդ «քաղաքականությունից»:

Կարելի է ասել, որ Հայաստանում գործ ունենք լեզվատիրության ճգնաժամի կամ դելեգիտիմացման գործընթացի հետ: Նկատենք, որ դելեգիտիմացիան մեզանում արտացոլում է այն իրողությունը, որ իշխանությունը կորցրել է ժողովրդի վստահությունը, իր հասարակական հեղինակությունն ու վարկը: Դելեգիտիմացիան դրսևորվում է հասարակական իդեալներից ու նպատակներից զանգվածային հիասթափության, օտարվածության մեջ: Ընդ որում, քաղաքական այդ ճգնաժամի հիմնական պատճառներն են՝ հայ հասարակության մեջ տիրապետող արժեքների և իշխող վերնախավի եսապաշտական շահերի միջև խոր հակասությունները, ժողովրդավարության գաղափարի, նրա սկզբունքների և քաղաքական պրակտիկայի միջև աճող հակասությունները, քաղաքական համակարգի մեջ ժողովրդի շահերի պաշտպանության մեխանիզմների բացակայությունը: Դրանց հետևում են կառավարման ապարատի հետագա բյուրոկրատացման, կոռուպցիայի, կաշառվածության աննախադեպ աճը, ինչպես նաև իշխող վերնախավի ներսում տարբեր խմբավորումների միջև մրցակցային պայքարի սրումը:

Տասնյակ հազարավոր հայեր իրենց զգում են լիովին մեկուսացված կամ «արտաքսված» քաղաքական գործընթացներից: Տասնյակ հազարավոր շարքա-

7 «Деловой экспресс», газета, Ереван, № 3, январь 2009.

յին քաղաքացիներ իրենց համարում են մոռացված և անօգնական: Նրանք համոզված են, որ իրենց կարծիքը իշխանությունների համար իրական ոչ մի նշանակություն չունի: Ավելին, նրանք իրենց զգում են իբրև քաղաքական ձեռնածությունների, մեքենայությունների օբյեկտներ, որոնք օգտագործվում են նրանց կողմից, ովքեր կառավարում են երկիրը: Նրանք անհանգստացած են, որ «կառավարող դասակարգին» չի մտահոգում այն, ինչը լուրջ տագնապներ է առաջացնում հայերի մեծամասնության մոտ:

«Լուռ մեծամասնությունը» խիստ ցածր է գնահատում ներկայիս հասարակական իրադրության, արտաքին ու ներքին քաղաքականության, կարևորագույն որոշումների ընդունման վրա ազդելու իր հնարավորությունները: «Անդեն» մեծամասնությունը իրեն զգում է ինչպես այն մարդը, որը բաժնետերերի ժողով է ներկայացել իր միակ բաժնետոմսով, մինչդեռ ամեն ինչ որոշում են խոշոր բաժնետերերը: Երբեմն տպավորություն է ստեղծվում, թե շարքային հայր և հասարակությունը, կարող են լավագույն դեպքում՝ ազդեցության փորձեր նախաձեռնել, սակայն չեն կարող ընտրել, կարող են խորհուրդ տալ իշխանություններին, բայց ո՛չ պահանջել նրանցից, կարող են արտահայտել իրենց կարծիքը, բայց ո՛չ վճռել: Թվում է, թե շարքային հայր գրկվել է իրեն լիարժեք քաղաքացի, հայրենիքի նվիրյալ զգալու, իր քաղաքական կամքը և ունակությունները հայրենի պետության վերաշինության գործին սպասավորելու ռեալ հնարավորությունից: Քաղաքական կյանքից օտարվածության այս վիճակը, որպես կանոն, նշանակալի մասի կողմից ծանր է ապրվում: Դա կապված է, նախ և առաջ, նրա հետ, որ բազմաթիվ հայեր այլևս չեն հավատում, թե իրենք կարող են, որևիցե ձևով ազդել քաղաքականության վրա: Միաժամանակ, նրանց մոտ հասունանում է այն բանի ըմբռնումը, որ ճգնաժամային ժամանակներում առանձին անհատի, ինչպես նաև ողջ ժողովրդի ճակատագիրն ավելի ու ավելի է կախված բախտորոշ համաքաղաքական որոշումներից:

Հայաստանում անվստահության, հետևաբար նաև՝ օտարվածության մասին են վկայում ընկերաբան Գ.Պողոսյանի ղեկավարությամբ 2001 թ. սկսված պարբերական հարցումների արդյունքները: Դեռևս 2001 թ. նա արձանագրել էր այն փաստը, որ հայ մարդիկ այլևս չեն վստահում քաղաքական համակարգի գրեթե բոլոր ինստիտուտներին: Ընդամին, այդ անվստահությունը նվազելու փոխարեն՝ ժամանակի ընթացքում է՛լ ավելի է ուժեղացել⁸: Ընդ որում, քննադատության սլաքը փոխադրվել է նաև պետական իշխանության մարզային, քաղաքային և համայնքային մարմինների վրա:

Հայաստանի քաղաքների և գյուղերի բնակչությունն առանձնապես սուր է զգում իր մեկուսացվածությունը և խորթացումը համայնքների հասարակական կյանքից, այն պատճառով, որ «իրենց կարծիքը որևէ կշիռ չունի տեղական իշխանությունների համար», և այն լավագույն դեպքում կարող են լսել, սակայն որոշումներ կայացնելու մենաշնորհն ամբողջովին պատկանում է տեղական ղեկավարներին: Պատահական չէ, որ հենց այդ ղեկավարներն են հասարակական կյանք ներմուծում համայնքային կոնֆլիկտներ, անձնական ամբիցիաներ, կլանային էգոիզմի տարրեր: Ծարքային քաղաքացին անվերջ լսում է տեղական իշխանությունների շաղակրատանքները՝ մարզի գյուղատնտեսության զարգացման ... նոր հեռանկարների մասին, իսկ ամենօրյա կյանքում անընդհատ բախ-

8 Տե՛ս «Երկիր» շաբաթաթերթ, Եր., 31.01.2001:

վում է անգապելի կաշառակերության, շորթողության, խաբեության և անօրինականության բազում փաստերի հետ: Քաղաքացիների և մարզային իշխանությունների փոխօտարման մասշտաբները գնալով ընդլայնվում են:

Եթե բարեփոխումների առաջին փուլում մարզերում տիրող վիճակը նույնացվում էր քառսի և անկառավարելիության, ապա այսօր՝ վարչական կամայականությունների հետ: Ընկերաբանական տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունից մարզերի բնակչության սոցիալ-քաղաքական օտարվածության ակնհայտ նախանշանները ձեռք են բերել անդառնալի, քրոնիկական բնույթ: Ընդ որում, ստեղծվել է խիստ տարիմաստ վիճակ. մի կողմից՝ պետության, նրա ինստիտուտների նկատմամբ վստահության անկումը գնալով խորանում է, իսկ մյուս կողմից՝ պահպանվում են պետական օգնության, սեփական խնդիրների լուծման գործում պետության մասնակցությունը ստանալու հույսերը: Այսինքն՝ պետության և նրա ինստիտուտների նկատմամբ անվստահությունը զարմանալիորեն զուգակցվում է պետության՝ որպես ինչ-որ լիազորված և պատասխանատու սոցիալական ինստիտուտի նկատմամբ հույսերի հետ:

Հեռիտրիդային Հայաստանում ձևավորված իշխանության ավտորիտար-կլանային համակարգի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման, ներքին և արտաքին քաղաքականության հիմնական լծակները կենտրոնացել են իշխող վերնախավի, կոռուպցիայով բյուրոկրատական ապարատի և նրանց սերտաճած օլիգարխիական խմբերի ձեռքում: Այդ յուրօրինակ «այլանը» դարձել է քաղաքական օտարման ամենատարբեր ձևերի, այդ թվում՝ կառավարող վերնախավի, նրա առաջին դեմքերի և կուսակցությունների հանդեպ աճող զանգվածային անվստահության հիմնապատճառը: «Քաղաքական նոր դասակարգը» կամ որ նույնն է՝ իշխող ընտրանին իրեն վերապահել է միայն մի պարտականություն՝ երկիրը կառավարել անվերահսկելի եղանակով: Այդ «դասակարգը» կամ ընտրանին դարձել է սեփական խմբային շահերը սպասարկող ուժ, իր ներփակ «քաղաքական աշխարհի» գերագույն սուբյեկտը: Դրանով է բացատրվում նաև այն անվիճելի փաստը, որ մեզանում քաղաքական անվստահությունը ձեռք է բերել համակարգային բնույթ: Այսինքն՝ քաղաքական անվստահության տրամադրությունները տարածվել են ոչ միայն գործադիր, օրենսդիր և դատական իշխանության, այլ նաև կուսակցությունների, ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունների վրա:

Մեզանում անցկացված ընկերաբանական հարցումների տվյալների համաձայն՝ հարցված հայերի մեծամասնությունը (74 տոկոսը) չի վստահում օրենսդիր իշխանությանը, 76 տոկոսը՝ դատական համակարգին, իսկ կառավարությանը՝ հարցվածների 73,6 տոկոսը: Հատկանշական է, որ իշխանության ճյուղերի գործունեության ցածր գնահատականը հանգեցրել է նաև քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության ցածր գնահատականին⁹: Հիշատակված հարցումների արդյունքները հավաստում են, որ հարցված հայերի 67,6 տոկոսը չի վստահում կուսակցություններին: Լիովին կամ մասնակիորեն վստահում է հարցվածների միայն 16, 2 տոկոսը¹⁰:

Հայաստանի բնակչության վերաբերմունքը կուսակցությունների նկատմամբ

9 Осипов В. Выборная демократия: политическая функция НПО. В сб.: Выборы и демократия: фактор гражданского общества. – Ереван, 2003, с.65.

10 Նույն տեղում, էջ 66:

քաղաքական համակարգից հայ հասարակության օտարման ամենավառ արտահայտություններից է: Դա վկայում է ոչ միայն «կուսակցական օտարման», այլև հայ հասարակության մեջ կուսակցությունների՝ իբրև համախմբող քաղաքական գործոնների չկայացածության մասին: Հաճախ կարելի է լսել, որ «մեզանում բազմակուսակցականություն կա, իսկ կուսակցություններ չկան»: Գործնականում չկան, բացառությամբ Հայ Յեղափոխական Դաշնակցության, որն ունի կուսակցական աշխատանքի ծանրակշիռ փորձ, մաս՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության, որը, սակայն, իրենից ներկայացնում է ավելի շուտ վարչաքաղաքական միավորում:

Մտահոգիչ է նաև կուսակցությունների բյուրոկրատացման աճի փաստը: Դրա էությունը կուսակցական շարքերից կամ հիմնական զանգվածից և հասարակությունից կուսակցական ապարատի խորացող օտարման մեջ է, որի հետևանքով կուսակցական բյուրոկրատիան վերածվել է ինքնաբավ, իր իսկ խմբային շահերը սպասարկող «հակահասարակական» ուժի: Քաղաքական կուսակցությունների շարքերը հիշեցնում են ավելի շուտ նեղ ընտրախավային խմբեր կամ յուրօրինակ «ընտրական մեքենաներ», որոնք արտացոլում են կառավարող ընտրանու մեջ մրցակցող խմբերի քաղաքական ինստիտուցիոնալացման գործընթացները: Հասարակական լուրջ մտահոգության առարկա է դարձել նաև կուսակցությունների «կարտելացման», այսինքն՝ պետական կառույցների հետ նրանց սերտաճման երևույթը:

Այսպիսով, հայ մարդու անվստահության և քննադատության հիմնական թիրախը հայկական «խտերիլիշմենտն» է, այսինքն՝ այն փոխկապված քաղաքական, տնտեսական և իրավական համակարգը, որը ստացել է օլիգարխիական կամ «հայրենակալվածքային» կապիտալիզմ անվանումը:

Մեզանում հասարակական կազմակերպություններն իրականում գոյություն ունեն միայն թղթի վրա և նրանց կողմից ձևավորված, այսպես կոչված՝ «սոցիալական ցանցն» ավելին չէ, քան փոշիացված հայկական սոցիումի քաղաքացիական ակտիվության «դրամաշնորհային» նմանակումը: Հետաքրքիր է, որ հասարակական կազմակերպություններին չի վստահում հարցվածների 42,8 տոկոսը¹¹:

Ցանկանում ենք ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ քաղաքացիական հասարակության կայացման պրոբլեմները կարծես թե իշխանությունների ուշադրությունից դուրս են մնացել: Արդյունքում ստացվել է, որ եթե իշխանության պետական ինստիտուտներն ինչ-որ ձևով կայացել են, ապա քաղաքացիական հասարակությունը բնավ էլ չի կայացել:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խորացումը խթանել է զանգվածների քննադատական վերաբերմունքն օլիգարխիական կապիտալի նկատմամբ: Շարքային հայի կարծիքով, հենց այդ կապիտալն է պատասխանատվություն կրում տնտեսության ճգնաժամի համար: Հարցումները ցույց են տալիս, որ շարքային քաղաքացիների մեծամասնությունը ճիշտ է որսացել տնտեսական ճգնաժամի և աղաղակող սոցիալական բեռնացվածության հիմնական պատճառը: Ինչպես ցույց են տալիս մեր հարցումները, հարցվածների մեծամասնությունը համաձայն է այն կարծիքի հետ, որ «խոշորագույն օլիգարխիական կապիտալը գերիշխում է տնտեսության մեջ և որոշում իշխանությունների

11 Նույն տեղում, էջ 66:

քաղաքական վարքագիծը» և, որ «կուսակցությունների մեծամասնությունը գործում է ի շահ մեծ բիզնեսի, այլ ոչ աշխատավորության»: Հայ հասարակության տնտեսական ապագան մեծամասնությանը ներկայանում է անորոշ ու անկանխատեսելի գծերով: Դա նշանակում է, որ շարքային և «միջին» հայը, որը զուրկ է «տանիքից», հովանավորչական որևէ աջակցությունից, սեփական հայրենիքում իր կենսական դրությունը թեկուզ աննշան չափով բարելավելու հնարավորություն չունի: Դրա մասին է վկայում «վերափոխված» հայկական սոցիումի մերօրյա որակը, որում օրինախախտությունը ինստիտուցիոնալացման միտվածություն ունի: «Տանիքը» նման փոխակերպման առաջնային տարրն է: Երևան են եկել Հայաստանի հասարակական կյանքի նոր դերակատարներ՝ սովետային բանկիրներ, առևտրականներ, արդյունաբերողներ, փաստաբաններ, միջնորդներ, արագորեն աճում են սովետային աշխատուժն ու կապիտալը: Աստիճանաբար կազմավորվում է սովետային պայմանագրային իրավունք, կազմավորվում է սովետային արդարադատություն և ի վերջո՝ «սովետային կարգ ու կանոն»:

Այսպես, սկսել են հիմնախախտվել ազգային կերպի պատմական վերարտադրության բարոյական հիմքերը՝ հայրենասիրությունը, արդարամտությունը, մայրենի լեզուն և այլ արժեքներ: Վերածնակերպելով ամերիկացի ականավոր սոցիոլոգ Չ.Ռ.Միլսի խոսքերը, Հայաստանում կենսահաջողության միակ անվիճելի չափանիշը դարձել է փողը, իսկ հաջողությունը հայ հասարակությունում համարվում է բարձրագույն արժեք: Ընդ որում, փողն ու իշխանությունը սերտորեն փոխկապված են: Փողը, հարստությունը իշխանության լծակներին տիրապետելու օբյեկտիվ վկայությունն է:

Դրան գումարվել է այն բանի աճող զգացողությունը, որ Հայաստանում բացակայում է սոցիալական արդարությունը: Շարքային հայը սկսել է հասկանալ, որ նրանք, ովքեր ազնվորեն աշխատում և ապրում են, գտնվում են հայ հասարակության հետնաբակերում հայտնվելու մշտական սպառնալիքի ներքո: Իսկ նրանք, ովքեր արհամարհում են համամարդկային և ազգային բարոյականության տարրական նորմերը, ապրում են ցոփ ու շվայտ կյանքով: Սոցիալական արդարության սահմանադրորեն ամրագրված նորմերը ոչ միայն չեն «աշխատում», այլև լիովին անտեսված են օլիգարխիական կապիտալի և նրանց շահերը սպասարկող քաղաքական մեքենայի կողմից: Ու թեև երբեմն հայ հասարակության հիվանդության մասին լրագրողների և քաղաքական գործիչների հայտարարությունները յուրօրինակ տուրք են մոդային և «կոնյուկտուրային» կարծրատիպերին, պատահական չէ, այնուամենայնիվ, ճգնաժամի և «հիվանդ հասարակության» մասին հաճախակի հիշատակումների արդեն իսկ փաստը: Այն արտացոլում է ընդհանուր գաղափարահոգեբանական իրադրությունը, որը վերջին տարիներին ստեղծվել է Հայաստանում:

Թվում է, թե այդպիսի իրադրությունը վկայում է այն մասին, որ երկրում արդեն ստեղծվել են զանգվածային պայթյունի համար բոլոր անհրաժեշտ պայմանները: Սակայն մոտակա ժամանակներում ոչ մի լուրջ պայթյուն չի ակնկալվում: Դժգոհության, սոցիալական կրիտիցիզմի և քաղաքական օտարվածության տրամադրությունները, որոնք տիպական են հայերի մեծամասնության համար, խիստ հակասական և իրարամերժ են: Մեծ մասամբ դրանք դեռևս չեն հենվում ակտիվ քաղաքական գործողությունների դիմելու բարոյաքաղաքական մղումների և գործնական պատրաստակամության վրա: Դրա պատճառներից

մեկն այն է, որ մեծամասնության շարքերում չկան կամրջող ներքին կապեր և այնպիսի գաղափարական միասնություն, որոնք կարող էին զանգվածային կոլեկտիվ քաղաքական գործողությունների հիմքը դառնալ:

Պրոֆեսոր Գ.Պողոսյանի կարծիքով՝ այսօր երկիրը մոտեցել է մի իրավիճակի, երբ այլևս նույնի կրկնությունը հնարավոր չէ: Արդեն ոչ մեկին հնարավոր չէ խաբել հասարակության զուտ գեղարարական փոխակերպումներով: Հարկավոր է լրջորեն փոխել կառավարման ողջ համակարգը¹²:

Այս ամենը պնդելով՝ հարկավոր է նկատի ունենալ, որ շարքային հայերի քաղաքական օտարվածության վիճակն արտահայտվում է առանձնահատուկ ձևով: Դա օտարվածություն է ոչ միայն կառավարող վերնախավից, որը կանգնած է հիմնական ինստիտուտների գլուխ, այլև քաղաքականությունից ընդհանրապես: Վստահության ճգնաժամը նրանց հանդեպ, ովքեր կանգնած են իշխանության գլուխ, արդեն վերաճել է անվստահության՝ ցանկացած քաղաքական գործողության նպատակահարմարության նկատմամբ¹³:

Ավելին, այն վերաճել է անվստահության շրջակա բոլոր մարդկանց, նրանց շարժառիթների ու վարքի նկատմամբ: Ընդ որում, իշխանությունների, հիմնական քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը շատ հայերի մոտ վերաճել է այն համոզման, թե հայ հասարակությունը թևակոխել է համազգային կամքի և գործողությունների ճգնաժամի տևական փուլ: Շարքային հայի մոտ գերիշխում է այն գիտակցությունը, որ ինքը անկարող է վերացնել այն ամենն, ինչը հարուցում է զանգվածային քննադատություն և դժգոհություն: Իսկ քաղաքական օտարվածության տրամադրությունների միահյուսումը՝ անգործության զգացման հետ, կյանքի է կոչել անհատի քաղաքական վարքի և կառուցվածքի ամենատարբեր մոդելներ: Օրինակ՝ ձևավորվել է օտարված հայ անհատի այնպիսի տեսակ, որը խիստ քննադատաբար է տրամադրված երկրի հիմնական քաղաքական ինստիտուտների նկատմամբ, սակայն իր գործնական, ամենօրյա կյանքում հետևում է քաղաքական համակերպվողականության հոգեբանությանը: Մանր, ամենօրյա հայկական նեղ օգտապաշտությունը այդ մարդու գիտակցության մեջ հաշտ ու խաղաղ գոյակցում է քաղաքական խոր անբավարարվածության հետ: Սակայն նման ցինիզմը, որի մեջ սեփական հայացքները, տրամադրությունները, բնավորության գծերը զուգորդվում են քաղաքական համակարգի կամ կոնյունկտուրայի պահանջներին հարմարվելու պատրաստականության հետ, ի վերջո ավարտվում է անհատի քաղաքական դիմազրկմամբ, պասիվությամբ: Հայ մարդն իրեն սկսել է զգալ որպես քաղաքական համակարգի հասարակ կցորդ: Քաղաքական մեքենայի պահանջով նա հագնում և հանում է ինչպես իր հագուստն, այնպես էլ քաղաքական դիմակները, ցուցադրելով այս կամ այն քաղաքական զգացմունքներ, հայացքներ, բնավորության գծեր: Նա նման է դերասանի, որն ինքնաբերաբար խաղում է իրեն պարտադրված քաղաքական դերեր, աստիճանաբար կորցնում է իր ներքին ամբողջականությունը և քաղաքական ես-ի որոշակիությունը: Ի դեպ, այդօրինակ ցինիկ անհատը հաճախ քաղաքական համակարգը համարում է այնքան խեղաթյուրված և քայքայված, որ նրանում իր համար տեսնում է միայն մի ելք՝

12 «Деловой экспресс», № 3, январь 2005.
 13 Ավելի մանրամասն տես Չարությունյան Մ. Հայաստանի քաղաքական մշակույթը. անցումային շրջանի հիմնահարցերը. – Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, 2003:

ծախվել նրան, ով ավելին կառաջարկի:

Չևավորվել են քաղաքականապես օտարված անձնավորության նաև այլ տեսակներ: Այսպես, որևէ բան փոխելու անհնարինության զգացումով համակված անհատի մոտ օտարվածությունը հաճախ արտահայտվում է իրականությունից ինքնափախուստի տարբեր ձևերի (օրինակ՝ կենցաղային հարբեցողության, թմրամոլության և այլնի մեջ): Կամ էլ, հաճախ սոցիալական խոր անբավարարվածությունը հեշտությամբ վերաճում է քաղաքական ագրեսիվության և չարացածության: Կայուն և հուսալի քաղաքական արժեքների բացակայության կամ անորոշության շնորհիվ դրանք տարածվում են կոնկրետ քաղաքական գործչի, կուսակցության վրա: Ընդ որում, սոցիալական դժգոհությունը տարածվում է քաղաքական և տնտեսական ինստիտուտների վրա՝ հաշվի չառնելով դրանց փոխադարձ կապերը: Տարածվում է նաև ամենատարբեր անձանց, ոչ նույնաբնույթ սոցիալ-քաղաքական պորբլեմների վրա:

Այն փաստը, որ Հայաստանում առկա անվստահությունն ու դժգոհությունը չեն բյուրեղանում քաղաքական համակարգի դեմ ուղղված զանգվածային բողոքի միասնական պոռթկման մեջ, վկայում է զանգվածների սոցիալական անբավարարվածության զգացումի և քաղաքական էներգիայի ապակենտրոնացվածության, ապախմբվածության մասին: Դժգոհության զգացումը, որ համակել է շատ շատերին, հաճախ կորցնում է իր ճշգրիտ հասցեն, ձեռք է բերում վերացական բնույթ: Քննադատական վերաբերմունքի և դժգոհության օբյեկտներ են դառնում շարքային հայի համար այնպիսի խիստ ընդհանուր, անորոշ հասկացություններ, ինչպիսիք են «ժամանակակից կյանքը», «մարդկային հասարակությունը» և այլն:

Խոր անբավարարվածությունն ու ակնհայտ քաղաքական կրիտիցիզմը, որ այնքան բնութագրական է «միջին» հային, չի հենվում տնտեսության, քաղաքականության, հանրային կառավարման և բարոյականության մեջ խորացող ճգնաժամի գլխավոր պատճառների հստակ ըմբռնման վրա: Դա վկայում է զանգվածային քաղաքական գիտակցության զարգացած չլինելու մասին: Ավելին, այն մասին, որ շարքային հայերին բնորոշ օտարվածության և դժգոհության տիպական վիճակները, նախևառաջ, որոշվում են սոցիալական հույզերով: Բացի այդ, նման հուզավիճակները բնութագրվում են նաև գաղափարական հատվածայնությամբ, տարամերժ սկզբունքների և գնահատականների գուտ մեխանիկական միակցվածությամբ (էկլեկտիկությամբ), ինչի պատճառով էլ դրանք աչքի են ընկնում անկայունությամբ, արագ վերելքներով և անկումներով, մի ծայրահեղությունից մյուսին չպատճառաբանված անցումներով: Այսպիսին է զգացումների և քաղաքական տրամադրությունների «ալլազմային» վիճակը, որը Հայաստանում գտնվում է մշտական խմորման, փոփոխության և փոխակերպման մեջ: Նրա կառուցվածքայնացումը և բյուրեղացումն այսօր ընթանում են տարբեր ուղղություններով՝ կյանքի կոչելով քաղաքական օտարվածության տարբեր ձևեր:

Օտարվածության և սոցիալական անգորության գիտակցության միահյուսման առավել բնորոշ հետևանքներից է քաղաքական ապատիան, այսինքն՝ լիակատար անտարբերությունը: Հաճախ կարելի է լսել, թե իբր՝ «հայ ժողովուրդը դարձել է համակ անտարբեր ու լուռ զանգված» կամ «չդատող և համակերպվող մարդկանց հասարակություն»: Որ հայ հասարակությունը «անտարբերությամբ»

լռում է, դա փաստ է: Սակայն սա ամեննին էլ «դատարկ», «բութ» լռություն չէ, այլ խոսուն լռություն:

Փորձենք հասկանալ, թե ո՞վ է այդ «համակ անտարբեր և օտարացած» հայը, նրա հավաքական «ես»-ը կազմող «լուռ մեծամասնությունը», ինչու՞ է խոր անվստահությամբ և օտարվածությամբ վերաբերվում Հայոց պետականության հիմնական տնտեսական և քաղաքական ինստիտուտներին: Ավելի ճիշտ, ոչ այնքան ինստիտուտներին, որքան դրանց գլուխ կանգնած կոնկրետ մարդկանց: Պատճառները թերևս ճիշտ կլինի փնտրել զանգվածային քաղաքական գիտակցության թերզարգացածության, ինչպես նաև այն յուրահատուկ հայկական անհատապաշտական հոգեբանության մեջ, որը մեզ ավանդաբար սովորեցրել է հասարակական-քաղաքական կյանքում ուշադրությունը գերկենտրոնացնել անձնավորությունների և անձնական գործոնի, այլ ոչ թե սոցիալական համակարգի, նրա մեջ մտնող ինստիտուտների օբյեկտիվ (այդ իմաստով՝ «անանձնական») քաղաքական բնութագրերի վրա:

Անտարակույս, իշխանության, պետականության և հար և նման այլ կատեգորիաների վերաբերյալ շարքային հայի առօրեական պատկերացումների մեջ խտացած է վերջին զույգ տասնամյակների տնտեսական և քաղաքական «բարեփոխումների», շուկայական և ժողովրդավարական արժեքների, օրենքի և օրինականության նկատմամբ հավատի ու վստահության կորստի կամ ծայրահեղորեն թուլացման անհատական փորձը: Հենց այդ փորձը գումարվելով համանման այլ փորձերի հետ, փոխակերպվել և դարձել է հավաքական փորձ, որն էլ, ի դեպ, կյանքի է կոչել իշխանությունների դելեգիտիմացման պրոբլեմը: Այդ պրոբլեմի հետագա սրումը հարուցել է հայ հասարակության համակարգային ճգնաժամ:

Այսպիսով, Հայաստանում երևակվել են նոր սոցիալ-քաղաքական լճացման բոլոր ախտանշանները, ընդ որում՝ այս անգամ ո՛չ սոցիալիստական, այլ կապիտալիստական լճացման: Այս կապակցությամբ հարկավոր է լրջորեն մտորել ոչ այնքան նոր քաղաքական գաղափարախոսության մշակման և ներմուծման մասին, որի շուրջ չեն դադարում խոսել որոշ քաղաքական շրջանակներ, որքան ժամանակակից պրոֆեսիոնալ պետական կառավարման մասին: Անկայուն և տրոհված հայ հասարակությունում անհնար է մշակել և իրականացնել պետական կառավարման բարեփոխման ծրագիր, եթե չհենվենք գիտության և գիտականորեն հիմնավորված, սոցիալապես արդյունավետ կառավարչական որոշումների և մեխանիզմների վրա: Ըստ էության, խոսքը պետական կառավարման այնպիսի համակարգի մասին է, որն ի գորու կգտնվի որակապես բարձրացնելու իշխանության ճյուղերի, բիզնես-ընտրանու, կուսակցությունների, ակադեմիական և ճյուղային գիտության, հասարակական կազմակերպությունների գործունեության կողողինացման և ազգանպաստ համագործակցության մակարդակը:

Պետական կառավարման գաղափարախոսությունը պետք է հիմնվի **սոցիալական գործընկերության և մասնակցային ժողովրդավարության** սկզբունքի վրա: Դա կառավարող վերնախավից կպահանջի քաղաքական վիթխարի կամք, էական կառավարչական նորամուծություններ, այդ թվում՝ համարձակ և ոչ ստանդարտ որոշումներ, դիմամիկ և ճկուն կադրային քաղաքականություն՝ կադրերի փոփոխելիության, մասնագիտական ձեռնհասության, ինքնուրույնու-

թյան և պատասխանատվության ապահովման առումով: Ակնհայտ է, որ կառավարչական վերափոխումներն անհնար է իրականացնել ներկայիս իշխանական վերնախավի շրջանակներում: Այն չունի որևէ լուրջ սոցիալական հենարան, հիմնականում հենվում է նոմենկլատուրային-կլանային կառուցվածքների, օլիգարխիական խմբերի և վարչական ռեսուրսների վրա: Ծայրահեղորեն անորոշ են նաև իշխանական վերնախավի կամ «բարձր դասակարգի» գաղափարախոսական դիրքերը: Եթե կարելի է ինչ-որ բան ասել նրա ընթացիկ քաղաքական կողմնորոշումների մասին, ապա նույնը չի կարելի ասել իշխանական վերնախավի գաղափարախոսական դիրքորոշումների, բարեփոխումների արագացման ռազմավարության մասին: Այդպիսիք պարզապես չկան կամ էլ գտնվում են խիստ սաղմնային վիճակում:

Կառավարող վերնախավն անկարող է հստակ ձևակերպել և կյանքում իրագործել հայ ժողովրդի մեծամասնության համար ընդունելի ու գրավիչ գաղափարներ և դրանց շուրջը համախմբել հայ հասարակությանը: Առհասարակ, Հայաստանում իսպառ չեն գործում քաղաքական համախմբման մեխանիզմները: Պատահական չէ, որ զանգվածային հայը թեկուզ դժգոհ, հիասթափված է ներկայիս իշխող վարչախմբից, նրա առաջին դեմքերից ու ապարատից, սակայն դեռևս ձեռք չի բերել քաղաքական գործողությունների հստակ ծրագիր: Նա իսպառ չի պատկերացնում, թե ինչպիսին պետք է լինի հայ հասարակության զարգացման ազգային մոդելը, քանզի լավատեսական և ուտոպիական մոդելներից խորապես հիասթափված է: Չգացնել է տալիս նաև հայ հասարակության սոցիալական ծայրահեղ հոգնածության հոգեբանական ֆենոմենը: Այն, մի կողմից, խորացրել է օտարումը քաղաքական իրականությունից, իսկ մյուս կողմից՝ մեծացրել է համակերպվողական վարքի սոցիալական շրջանակները:

Այսպիսով, իշխանությունների և ժողովրդի փոխօտարացումը գնալով խորանում է, ուրվագծելով օլիգարխիական ավտորիտարիզմի վրա հիմնված քաղաքական վարչակարգի ճգնաժամի ազգավտանգ հեռանկարները: «Ժողովրդավարական կառավարման տարիներին, - նշում է Գ. Պողոսյանը, - հասարակության և իշխանության ջրբաժանը, որքան էլ որ տարօրինակ է, էլ ավելի խորացավ: Հասարակությունը զգում է քաղաքական օտարվածություն, իսկ իշխանությունները ժողովրդին մերձենալու փորձեր չեն կատարում... Ժողովուրդն արդեն վարժվել է, որ իշխանությունը չի բացատրվում իր ժողովրդի հետ, չի խորհրդակցում նրա հետ և հարկ չի համարում լսել նրա կարծիքը կամ հաշվետու լինել նրա առաջ՝ ամենատարբեր հրատապ հարցերի առիթով»¹⁴:

Քաղաքական օտարման պրոբլեմի մեղմացումը կամ աստիճանական լուծումը նշանակալի չափով կախված է ոչ միայն հիմնական տնտեսական և քաղաքական ինստիտուտների, ընտրությունների ընթացակարգերի կատարելագործումից, քաղաքացիների հանդեպ իշխանությունների ռեալ պատասխանատվության մակարդակի բարձրացումից, այլև շարքային քաղաքացու՝ պետության հանդեպ պատասխանատվության էական աճից: Գաղտնիք չէ, որ քաղաքացիների լայն մասնակցությունը հայ հասարակության և պետության կառավարման գործին շարունակում է մնալ Հայաստանի քաղաքական համակարգի «աքիլեսյան գարշապարը»:

14 Погосян Г.А. Современное армянское общество: особенности трансформации. Ереван, «Лусабац», 2003, с. 266.

Հայտնի է, որ ժողովրդավարական ինստիտուտները կարող են ստեղծվել առանց զանգվածների ակտիվ մասնակցության, սակայն առանց ժողովրդի զանգվածային մասնակցության և աջակցության ժողովրդավարությունը չի կարող գոյություն ունենալ:

Այսօր մեզանում չկան իշխանությունների վրա ազդելու, ինչպես նաև հայ ժողովրդի կոտորակված ուժերը համախմբելու գործուն մեխանիզմներ: Հենց այդ պատճառով էլ երկրում շարունակվում են վերարտադրվել հասարակական-քաղաքական պասիվությունն ու օտարումը:

Հարցը մնում է բաց. ինչպե՞ս և ի՞նչ քաղաքական մեխանիզմներով ապահովել հայ հասարակության և պետության հակադարձ կապը, ինչպե՞ս հաղթահարել կամ մեղմացնել դրանց միջև փոխանվաստահությունն ու փոխօտարվածությունը, ինչպե՞ս և ի՞նչ եղանակներով հայ հասարակության բոլոր կարող և հայրենասեր ուժերին ներգրավել պետական կարևոր որոշումների մշակման և ընդունման գործընթացների մեջ: Մա է խնդիրների խնդիրը: Ուստի, հարկավոր է խթանել հետազոտական որոնումները, քանի որ տեղապտույտը տեսության մեջ և քաղաքական պրակտիկայում կարող է կործանարար լինել հայոց պետականության ճակատագրի համար:

Վերջին տարիներին մեր որոնումներն ուղղված են եղել «մասնակցային ժողովրդավարության» արևմտյան մոդելի տեղայնացման խնդրին: Ընդ որում, արդեն նշել ենք, որ անհրաժեշտ է այդ մոդելը ոչ թե մեխանիկորեն ընդօրինակել, այլ արդյունավետ կերպով այն համադրել Հայաստանի պատմամշակութային առանձնահատկությունների հետ: Նման փորձի հաջողված օրինակ է Ռուսաստանում Հասարակական պալատի և Ղազախստանում «Ղազախստանի ժողովուրդների ասամբլեայի» ստեղծումը: Քաղաքացիական հասարակության այդ նոր ինստիտուտների շնորհիվ նշանակալիորեն ուժեղացել է պետական կառավարման մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Ավելին, այդ նոր կառույցները դարձել են հասարակական երկխոսության յուրօրինակ քաղաքական հրապարակներ, որտեղ ներկայացվում և քննարկվում են քաղաքացիական նախաձեռնությունները: Բացի այդ, նրանք դարձել են կարևորագույն պետական որոշումների նախագծերի հասարակական փորձաքննության քաղաքական դաշտ: Ընդ որում, այդ կառույցների ստեղծման գաղափարն առաջադրվել է Ռուսաստանի Գաշնության և Ղազախստանի նախագահների կողմից, որոնք շահագրգռված են կարևորագույն քաղաքական որոշումների քննարկման գործընթացներին լայն հասարակության ներգրավվածությունն ապահովելու խնդրով: Խորհրդանշական է, որ դեռևս 2005 թ. Ռուսաստանի Պետդուման ընդունել է «Օրենք Հասարակական պալատի մասին»:

Մեզանում ևս վերջերս ստեղծվել է համանման ինստիտուտ՝ Հանրային խորհուրդ: Եվ մեր հասարակայնությունն ակնկալում էր, որ այն կդառնա լայն երկխոսության քաղաքական հրապարակ: Որ դրա շնորհիվ առարկայական կերպարանք կստանա իշխանության մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, որ ամենօրյա կյանքում կսկսի աստիճանաբար արմատավորվել կարևորագույն պետական որոշումների հասարակական փորձաքննության պրակտիկան: Այսինքն՝ կստեղծվի մի մեխանիզմ, որի կիրարկումը կարող է մեղմացնել պետության և հայ հասարակության փոխօտարվածությունը: Դեռևս Հանրային խորհրդի ստեղծման նախօրյակին թերթային

հրապարակումներից մեկում կարծիք էինք հայտնել, որ այդ կառույցն ի գործու կգտնվի կատարելու իր առաքելությունը միայն այն դեպքում, եթե կայանա որպես իրապես գործող ինստիտուտ, այլ ոչ թե նախագահական ապարատի ինչ-որ անդեն, «խորհրդակցական» կցորդ:

Ապարատային մեքենայությունների շնորհիվ մեր բոլոր սպասումներն այդպես էլ չարդարացան: Այդպես էլ Հանրային խորհուրդը չկայացավ որպես լայն երկխոսության քաղաքական հրապարակ, որպես իշխանության գործընկեր պետական գործունեության այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսիք են Հակա-ճգնաժամային ծրագիրը, սոցիալական նախագծերը և նախաձեռնությունները, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների քննարկումները և այլն: Գրանից հետո էլ իշխանությունը շարունակում է գործել «միակողմանի երթևեկության» ռեժիմով, կարևոր վճիռներ կայացնելիս հարկ չի համարում յուրօրինակ «սոցիալական պայմանագիր» կնքել հայ հասարակության և հայ ժողովրդի հետ:

Քաղաքագիտության այբբենական ճշմարտություններից մեկն ասում է՝ քաղաքացիները վստահում են միայն այն պետությանը, որը նրանք վերահսկում են: Ուստի այսօր անհրաժեշտ են Հայաստանի իշխանություն - հայ հասարակություն հարաբերությունների փոխակերպման ոչ թե մեխանիկական մնամակումներ կամ ապարատային նորամուծություններ, այլ պետություն - հասարակություն համակարգի իրական և համընդգրկուն ժողովրդավարական վերափոխումներ:

Summary

THE ALIENATED ARMENIAN IN INDEPENDENT ARMENIA: Politological Perspective

Manuk A. Harutyunyan

In the article the manifestations of one of the most crucial notions of modern social sciences, i.e. the phenomenon of alienation, are being examined in Armenia. An ordinary Armenian citizen's isolation, alienation from those basic institutions, groups and people who supervise the country's political life is being demonstrated. The Armenian's flexibility and passive position to the latters bring to the gradual formation of shady stipulated right, shady justice and, actually, "shady law and order" in the country.

The fact that the diffidence and discontentment that exist in Armenia are not crystallized in the massive complaint against the political system testifies to the feeling of social dissatisfaction and the de-centralization and de-unity of the political energy. The reasons are to be sought in the undeveloped nature of the massive political consciousness, as well as the individuum-worshipping psychology uniquely typical of the Armenians, through which we traditionally used to be taught to concentrate our attention on persons and the personal factor in the socio-political life. To overcome the phenomenon of alienation in Armenia, the state management ideology should be based on the principle of social cooperation and democratic participation, as without the nation's massive participation and assistance, democracy cannot exist.